

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒՏ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը «հասարակագիտություն» առարկայի դասավանդման ընթացքում

Անցկացման վայրը՝ Մարտունի

Դպրոց՝ Վարդենիկի Ա. Օհանյանի անվան №2 հիմնական դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ Բեյբության Հասմիկ

Ուսուցչուհի՝ Միլիտոնյան Գոհար

ՄԱՐՏՈՒՆԻ-2022

Բովանդակություն

Ներածություն-----	3-4
Գլուխ 1. «Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը և նրա դերը սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության գործընթացում-----	5-7
Գլուխ 2. Սովորողի արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբաժանելի հիմք -----	8-10
Գլուխ 3. Փորձարարական հետազոտություն -----	11
3. 1. Խմբի նկարագիրը-----	11
3. 2. Փորձարարական դաս-1 /Հիմնարար արժեքների կիրառումը հասարակագիտության մեջ/-----	12-15
3.3. Փորձարարական դաս-2 /Հանդուրժողականությունը՝ որպես սովորողի պատվի ու արժանապատվության պաշտպանության հիմնասյուն/-----	16-17
Եզրակացություն և առաջարկություններ-----	18-19
Գրականության ցանկ-----	20
Հավելված-----	21
➤ Դասապլան-1-----	21-24
➤ Դասապլան-2-----	25-27

Ներածություն

«Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը»...

Թեմայի արդիականությունը:Ներկա ժամանակաշրջանի հասարակական կյանքում իրականացող քաղաքական, սոցիալ-տնտեսական փոփոխությունները, բարոյական հարաբերություններում և արժեքներում տիվային ոլորտում առկա տեղաշարժերը, ինչպես նաև ուրբանիզացիան հանրակրթությանն առաջադրում են նոր խնդիրներ՝ կապված աճող սերունդի կողմից ազգային և համամարդկային փորձի յուրացման անհրաժեշտության, քաղաքացիական որակների ձևավորման, միջմշակույթային հաղորդակցման, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների տիրապետման, արժեքային կողմնորոշումների ձևավորման և կարողունակությունների ամրապնդման հետ:

Կյանքի առաջանցիկ զարգացումները թելադրում են նոր մոտեցումներ ձևավորել հասարակագիտության տիրապետման, դրա միջոցով նաև աշխարհի արժեքային, գնահատողական վերաբերմունքի ձևավորման նկատմամբ: Հանրակրթության դերն ու նշանակությունն արժևորվում են ոչ միայն աճող սերնդին անհրաժեշտ գիտելիքներով, կարողունակություններով և հմտություններով ապահովման, այլ աշխարհի, մարդկային փոխհարաբերությունների, մշակույթային արժեքների նկատմամբ պատկերացումների և արժեքային կայուն կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից: Հանրակրթության արդի զարգացումները բնութագրվում են կրթության բովանդակության մարդասիրական և մշակութաբանական ուղղվածությամբ, որն ենթադրում է բազմամշակույթային հանրության մեջ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի գիտակցում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը հասարակագիտության դասավանդման ընթացքում, հետազոտել սովորողին՝ որպես

հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող, կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական, սոցիալական և անհատական կարողունակությունների և հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու անձ, ինչպես նաև ամրապնդել աշակերտների ձեռք բերված նոր գիտելիքներն ու կարողունակությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Իրականացնել անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական վերլուծություն, բնութագրել հետազոտության թեմային վերաբերող հիմնական հասկացությունները:
2. Բացահայտել սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորվածության առկա վիճակը, սահմանել մակարդակները և դրանք բնութագրող չափանիշները:
3. Առաջադրել և տեսականորեն ու գործնականում հիմնավորել դպրոցում հասարակագիտության ուսուցման գործընթացում սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման մանկավարժական պայմանների և մեթոդների համալիրը:
4. Մշակել սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման մանկավարժական մոդելը:

«Հասարակագիտություն» առարկայի միջոցով սովորողներին հնարավորություն է ընձեռվում գիտելիքներ ձեռք բերել ազգային արժեքային հասկացությունների՝ ընտանիքի, ընկերասիրության, հայրենասիրության, բարեկիրթ հաղորդակցության, ազնվության, հայ ժողովրդի պատմության, սովորույթների, մշակույթի մասին:

Միաժամանակ սովորողները ձեռք են բերում աշխարհաճանաչողական գիտելիքներ, անձնային բարձրարժեք որակներ, ձևավորվում է լեզվամտածողությունը:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են ուսուցման տարբեր մեթոդներ, հնարներ, մոտեցումներ՝ դասալսումներ, դասերի և դասագրքերի վերլուծություն, գործնական աշխատանքներ, զրույց, դիտում, խմբային աշխատանք և այլն:

Գլուխ 1.

«Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը և նրա դերը սովորողների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանության գործընթացում

Հայաստանի Հանրապետության ազգային դպրոցը, որը հսկայական նվաճումներ ունի կրթության և դաստիարակության համակարգում, ներառված է կրթական բարեփոխումների դժվարին գործընթացի մեջ, որը նպատակաուղղված է մի կողմից ընդհանուր հասարակական կրթության հիմնախնդիրների լուծմանը, մյուս կողմից՝ ազգային կրթության առանձնահատկությունների զարգացմանը, ազգային արժեքների գնահատմանն ու պահպանմանը:

Այս դեպքում կարևորվում է այն հանգամանքը, որ կրթությունը անհատի, հասարակության և պետության շահից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

«Հասարակագիտություն» առարկայի արդիականությունը հիմնվում է ուսուցման երեք բաղադրիչների վրա՝ իմացական, սոցիալական և անձնային¹:

Իմացական (կոգնիտիվ) բաղադրիչ: Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին

¹[50b54b298cdad8a2d7363192620d96e8.pdf \(escs.am\)](#)





պատկերացումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը, տարբեր երևույթների մասին առկա տարակարծությունները կարևոր նախապայման են սովորողների մոտ քննադատական և ստեղծագործական մտածողություն զարգացնելու տեսանկյունից: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները, ինչի արդյունքում հաճախ փորձում են մարդկանց ապակոդմնորոշել, մանիպուլացնել, զրկել ինքնություն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է, որպեսզի սովորողներն ունենան քննադատական մտածողություն: Վերջինս հնարավորություն է տալիս հասարակական երևույթները դիտարկել տարբեր կողմերից, կշռադատել դրանց դրական և բացասական ասպեկտների մասին և կայացնել հիմնավորված որոշումներ: Հասարակական գործընթացների բազմազանությունը նաև լավ հնարավորություն է ստեղծում դրսևորելու ոչ ստանդարտ մոտեցումներ և դրանով իսկ զարգացնելու սովորողների ստեղծագործական մտածողությունը: Այս առարկայի դասավանդման շրջանակում առաջնային է համարվում քաղաքացիական, իրավական, տնտեսական, մշակութային, մեդիագրագիտության ձևավորումը, որոնք համարվում են բարեկեցիկ հասարակության հենասյուները: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորել մարդու մտածողության մասին և ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում:

Սոցիալական բաղադրիչ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունը: Շատ կարևոր են այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը, մասնակցությունը: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել սովորողների իրավունքների ու ազատությունների, պարտքի ու պատասխանատվության, արժանապատվության, սոցիալական հմտությունների և այլնի մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթներ բացատրելու գործընթացում:

Անձնային զարգացման բաղադրիչ: Հասարակությունների զարգացման մակարդակը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Այս առումով կարևոր են անձի հուզական հասունությունը, ինքնաճանաչողության, ինքնագնահատման բարձր հմտությունները: Անձի ձևավորման գործում էական նշանակություն ունեն այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները: Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը մեծ դեր ունի դպրոցի քաղաքացիական կրթության առաքելության իրականացման գործում:

«Հասարակագիտություն» առարկայի առանձնահատկությունն այն է, որ բաղկացած է սոցիոլոգիա, հոգեբանություն, իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն գիտակարգերից, ինչը հնարավորություն է տալիս հասարակական երևույթներն ընկալել բազմակողմանիորեն և ինտեգրված եղանակով: Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ հասարակագիտական հարցերի մասին չկան միանշանակ տեսակետներ, վերջնական լուծումներ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների մոտ զարգացնել խնդիրները համակողմանի դիտարկելու, այլակարծությունը հանդուրժելու, հետազոտական և նախագծային մոտեցումները կիրառելու հնարավորությունները:

Հասարակագիտության հիմնական գաղափարներն են.

-  անհատ,
-  հասարակություն,
-  արժեքներ,
-  մարդկության գլոբալ հիմնախնդիրներ:

Այս գաղափարների ուսուցումը հնարավորության է տալիս սովորողներին տիրապետելու հասարակական խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու արդյունավետ մոտեցումներին:

Գլուխ 2.

Սովորողի արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք

Արժանապատվությունը (լատիներեն՝ dignitas) մարդու իրավունքների հիմնարար հասկացությունն է, բարձրագույն և առանցքային արժեքը, մարդու անքակտելի և օտարելի իրավունքը: Անձի արժանապատվությունը այն հիմքն է, որի վրա կառուցված է մարդու իրավունքների համակարգը: Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում:

Մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթները² պատկանում են սահմանադրական սկզբունքների թվին, որոնք պայմանավորում են սահմանադրության բոլոր մյուս դրույթները:

Մարդու իրավունքների հիմնարար սկզբունք լինելուց զատ՝ այն նաև փիլիսոփայական³ և բարոյագիտական հասկացություն է: Իբրև այդիպիսին այն

² ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են», իսկ 14-րդ հոդվածը՝ «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»: ԳԴՀ ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասը սահմանում է. «Մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Այն հարգելն ու պաշտպանելն ամբողջ պետական իշխանության պարտականությունն է»:

³ Բաղդասարյան Վ., Ռոզենտալ Մ., Բաղդասարյան Ս. (1975): Փիլիսոփայական բառարան: Երևան: Հայաստան: էջեր՝ 40–41

ընկալվում է որպես մարդու հատուկ բարոյական վերաբերմունքը ինքն իր հանդեպ և նրահանդեպ հասարակության վերաբերմունքը, որտեղ ընդունվում է անձնավորության արժեքը: Մի կողմից մարդու սեփական արժանապատվության գիտակցումը անձնավորության ինքնագիտակցման և ինքնավերահսկման ձևն է, նրա վրա է հիմնվում ինքն իր հանդեպ մարդու պահանջկոտությունը: Իր արժանապատվության հաստատումը և պաշտպանումը ենթադրում է նրան համապատասխանող բարոյական արարքների կատարում (կամ, ընդհակառակը, թույլ չի տալիս մարդուն վարվելու իր արժանապատվությունից ցածր): Այս իմաստով սեփական արժանապատվության ըմբռնումը, խղճի և պատվի հետ միասին, հանդիսանում է մարդու՝ ինքն իր առջև որպես պատասխանատվության գիտակցման եղանակներից մեկը: Մյուս կողմից անձի արժանապատվությունը պահանջում է նաև մյուս մարդկանցից հարգել անհատին, ճանաչել մարդու համապատասխան իրավունքներն ու հնարավորությունները, նրան ներկայացվող բարձր պահանջկոտությունը⁴:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության գլխավոր նպատակը պետք է լինի սովորողի իրավունքների և ազատությունների, արժանապատվության պաշտպանությունը: Դպրոց և սովորող փոխհարաբերություններում գերակայությունը պետք է տրվի սովորողին: Սովորողի, անհատի իրավունքները մարդուն իր աշխարհի գալու օրվանից տրված իրավունքներն են, որոնք նա ստանում և կրում է մինչև մահ:

Ժողովրդավարական երկրի հենքն իրավունքի գերակայությունն է, դրանով է չափվում այդ երկրում ապրող մարդու որակը, մակարդակը և կեցությունը: Իրավունքը բաժանվում է պոզիտիվի և բնականի: Այս իրավունքներից իրենց կարևորությամբ առանձնանում են բնական իրավունքները, որոնք մարդուն տրված են ի ծնե, և որոնք պետք է հիմք հանդիսանան պոզիտիվ իրավունքի համար: Եթե օրենքը հակասում է բնական իրավունքին, ապա այն չունի գոյության իրավունք: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանը սկսվում է հետևյալ նախադասությամբ՝ «Քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն

⁴Կոն Ի. (1985): Բարոյագիտական բառարան: Երևան: Հայաստան: էջեր 40–41

աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է, գլխավոր ասամբլեան հրապարակում է սույն մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը»⁵:

Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Սովորողն իրավունք ունի՝

- 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.
- 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
- 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության բազայից.
3.1) ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն.
- 4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.
- 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
- 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
- 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
- 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.
- 9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

⁵[https://Մարդու_իրավունքների_համընդհանուր_հռչակագիր_-_Վիքիպեդիա՝_ազատ_հանրագիտարան_\(wikipedia.org\)](https://Մարդու_իրավունքների_համընդհանուր_հռչակագիր_-_Վիքիպեդիա՝_ազատ_հանրագիտարան_(wikipedia.org))

Յուրաքանչյուրս ունենք ազատություն խոսելու, արտահայտվելու, շարժվելու և այլն... Սակայն ոչ բոլորն են այդ ազատությունը ճիշտ օգտագործում և մարդկանց մեծամասնությունը չարաշահում է իրեն տրված ազատությունը: Սովորողը ազատ է լինում, երբ կարողանում է կառավարել ինքն իրեն, հասկանում է իրեն տրված չափն ու սահմանը և պատասխանատու է իր արարքներին: Ազատությունը և պատասխանատվությունը կապված են իրար հետ. եթե սովորողը գիտակցում է իր պատասխանատվությունները, ապա նա նույնպես գիտակցում է իրեն տրված ազատությունները և կարողանում է պատասխանատու լինել իր ազատությանը և ազատության սահմանների խախտմանը...

Գլուխ 3.

Փորձարարական հետազոտություն

Կրթության բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական ձևերի ու մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի նորովի ճշգրտում:

3.1. Խմբի նկարագիրը: Հետազոտական աշխատանքը իրականացվել է Գեղարքունիքի մարզի Վարդենիկի №2 հիմնական դպրոցի աշակերտների շրջանում՝ VIII և դասարանում, որտեղ սովորում են 23 աշակերտներ՝ 10 աղջիկ և 13 տղա:

Դասարանում սովորում են և՛ ուժեղ, և՛ թույլ ընդունակություններով օժտված երեխաներ: Դասարանում սովորում է նաև ներառական կրթության կարիք ունեցող մեկ աշակերտ, որն ունի հենաշարժողական խնդիրներ: Հետազոտական աշխատանքում ներգրավված աշակերտներն ունեն կարողությունների և հմտությունների տարբեր մակարդակներ:

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են ուսուցման տարբեր մեթոդներ, հնարներ, մոտեցումներ, գործնական աշխատանքներ, զրույց, դիտում, խմբային աշխատանք և այլն: Հետազոտությունն իրականացվել է դասի միջոցով՝ հասարակագիտության դասերին:

Դասը սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Այդ ձևում ներդրված են կրթադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր⁶:

Հաջորդ ենթավերնագրերում կներկայացնենք փորձարարական դասերը «Հիմնարար արժեքներ» և «Հանդուրժողականություն և անհանդուրժողականություն» թեմաների շուրջ:

3.2. Փորձարարական դաս-1

Հիմնարար արժեքների կիրառումը հասարակագիտության մեջ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել:

⁶Այվազյան Հ., «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միություն, Երևան, 2014թ.

Արժեհամակարգը լայն հասկացություն է, որն իրենից ներկայացնում է դժվարին, տևական համակարգ: Այս ոլորտում կարճ ժամանակահատվածում արդյունք ստանալը այդքան էլ հեշտ չէ: Եթե ուսուցիչը սովորեցնում է, որն է մաթեմատիկական կանոն կամ աղյուսակ, ապա կարելի է աշակերտից ակնկալել ինչ-որ արդյունք՝ նշված ժամանակահատվածում, որը կարելի է իրագործել բանավոր կամ գրավոր աշխատանքների միջոցով: Սակայն նույնը չի կարելի ասել դաստիարակչական խնդիրների վերաբերյալ արժեհամակարգի ձևավորման հարցում, որովհետև այն կարող է ձևավորվել շատ տարիներ հետո: Ցավոք, կարելի է օրինակ բերել վերջին պատերազմի մեր հերոսների սխրանքներն ու անձնվիրաբար կատարած հերոսությունները, որոնք խոսում են արժեհամակարգի ձևավորման մասին: Գուցե տղաները դպրոցական տարիներին չեն գիտակցել հայրենիքի վեհ գաղափարը, բայց երբ եկավ պահը, անհրաժեշտությունը, նրանք ցուցաբերեցին անկարելին, զոհելով իրենց կյանքը, պայքարեցին մինչև արյան վերջին կաթիլը: Որն էլ խոսում է հենց այն մասին, որ դպրոցական տարիներին ձևավորված արժեհամակարգը նրանք կրում էին իրենց մեջ և օգտագործեցին հարկ եղած ժամանակ: Իսկ արժեհամակարգի ձևավորման հարցում մեր՝ ուսուցիչներիս, սերմանածն է, որն իր արդյունքը տալիս է թեկուզ ուշ, բայց նպատակային: Այս աշխատանքում մանկավարժը պետք է ունենա մեծ նվիրում, համբերություն:

Շատ հաճախ առօրյա կյանքում հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ կրթված մարդու մոտ բացակայում է դաստիարակությունը: Աշակերտը կարող է լուծել բարդագույն խնդիրներ, յուրացնել համապատասխան գիտելիքներ, բայց եսասիրության հակումներ դրսևորի, չպահպանի տարրական համակեցության կանոնները: Լինում են նաև դեպքեր, երբ բարոյական բոլոր կողմերով օրինակելի մարդը գիտելիքների պակասի պատճառով չի կարողանում իր տեղը գտնել կյանքում: Ելնելով այս ամենից, առաջանում է հարց, ի՞նչ անել և ինչպե՞ս ...

Ինչպիսի դերակատարություն պետք է ունենա ուսուցիչը այս հարցում, որպեսզի ճիշտ արժեհամակարգ ձևավորի աշակերտի մոտ՝ կյանքում ճիշտ տեղ գտնելու համար:

Առաջին հերթին պետք է հիմնավորի կրթության 4 հիմնասյուները.

1. սովորել իմանալու համար

2. սովորել կիրառելու համար
3. սովորել լինելու համար
4. սովորել համակեցության համար




Բոլոր կետերում առկա է սովորել բառը, որ պարտադիր է բոլոր դեպքերում: Այլ են նպատակները, պետք է սովորել որպեսզի իմանալ կիրառել սովորածը, պետք է սովորել, որ լինել, պարզապես ապրել և սովորել, որպեսզի դառնալ լիիրավ քաղաքացի հասարակության մեջ: Այս չորս կետերի վրա է հիմնված արժեհամակարգի ձևավորումը, որոնց նաև կողմնակի ազդակներ են ազդում՝ ընտանիք, միջավայր, հասարակություն, պետական մոտեցում և այլն: Մեծ դերակատարումը ուսուցչինն է, ով դասաժամին ուսումնական նպատակներից բացի պետք է կարևորի նաև դաստիարակչական նպատակները: Ինչ խոսք, առարկայական պահանջները երբեմն թույլ չեն տալիս անդրադառնալ դաստիարակչական խնդիրներին, սակայն, այն պետք է աշխատել համատեղ ուսումնականի հետ: Այստեղ շատ կարևոր է, որ ուսուցչի աչքը լինի ամենատես, հոգին՝ ամենազգաց, իսկ միտքը լինի ամենաընթաց:

Ուսուցիչը, իր առջև հարց պետք է դնի՝ ի՞նչ (ինչ անել, որ դասաժամը անցնի լավ), ինչո՞ւ (ուսուցիչն իր առջև պետք է հստակ նպատակներ դնի, ոչ միայն ուսումնական, այլև դաստիարակչական), ինչպե՞ս (ինչպես ուսուցիչը, դասաժամին հասնի իր նպատակին): Ուսուցիչը պետք է այս ամենն իրականացնելու համար ունենա մասնագիտական կարողություններ, ստեղծագործական մոտեցում, մեթոդական հարուստ զինանոց:



Օրինակ՝

- ❖ **Ի՞նչ**- Ի՞նչ է արժեքը, պարտքը և որո՞նք են հիմնարար արժեքները:
- ❖ **Ինչո՞ւ** -ԻՆչու է կարևոր հիմնարար արժեքների պահպանումը:
- ❖ **Ինչպե՞ս** – Ինչպե՞ս օգտագործել T- աձև մեթոդը⁷.



3. 3. Փորձարարական դաս-2

Հանդուրժողականությունը՝ որպես սովորողի պատվի ու արժանապատվության պաշտպանության հիմնասյուն

Հանդուրժողականությունը այլ աշխարհայացքի հետ հարմարվելու կարողություն է, սոցիալականներդաշնակության համար անհրաժեշտ պարտադիր պայման: Այսօր հասարակությունը և աշխարհն ամբողջությամբ փոխվել են վիճակագրականության վրա՝ որպես հիմնարար համընդհանուր սկզբունքի: 21-

րդ դարի սկզբում առավել հատուկ նշանակություն է ձեռք բերել հանդուրժողականության էթնիկ, ռասայական և դավանաբանական բաղադրիչները:

Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրում ասված է. «Հանդուրժողականությունը մեր աշխարհի հարուստ ու բազմազան մշակույթների, մեր արտահայտվելու ձևերի, ինչպես նաև մարդ լինելու վերաբերյալ տարբեր աշխարհայացքների հարգելը, ընդունելն ու արժևորելն է: Այն տարածվում է տեղեկացվածության, թափանցիկության, կապերի, մտքի, խոսքի և խղճի ազատության միջոցով: Հանդուրժողականությունը ներդաշնակությունն է բազմազանության մեջ: Սա ոչ միայն բարոյական, այլև քաղաքական և օրենքի պարտականություն է: Հանդուրժողականության առանձնահատկություններից մեկն այն է, որ դրա միջոցով հնարավոր է դառնում խաղաղության հաստատումը, ինչպես նաև պատերազմի մշակույթի փոխարինումը խաղաղության մշակույթով»:



Հանդուրժողականությունը չի ենթադրում, որ ինչ-որ մեկը պետք է անտեսի սեփական արժեհամակարգը և ընդունի մյուսը կամ ների մյուսների արարքները: Այն հարգանքի բարձրագույն ձևերից մեկն է ընդունել մեկ ուրիշ մարդու իրավունքները: Սրանից չի բխում, որ որևէ մեկը պետք է հանդուրժի հասարակական անարդարություններն ու մի կողմ դնի սեփական համոզմունքները: Հանդուրժողականության ողջ իմաստն այն է, որ մարդ անհատն ազատ է իր համոզմունքների մեջ և պետք է ընդունի, որ մյուսներն էլ ունեն այդ նույն իրավունքը: Սա նշանակում է՝ բոլո՛րը պետք է ընդունեն, որ մարդիկ ունեն տարբեր արտաքին, խոսելաոճ, պահվածք, արժեհամակարգ և այլն, և այս տարբերությունների հետ մեկտեղ իրավունք ունեն ապրել խաղաղ և մնալ այնպիսին ինչպիսին կան: Հանդուրժողական սկզբունքներից մեկն այն է, որ ինչ-որ մեկի տեսակետը չպետք է պարտադրվի մյուսներին:

Այս պահին անխուսափելի է մտածել, որ ապագա սերունդների առջև մենք՝ ուսուցիչներս ունենք մեծ առաքելություն՝ արժեհամակարգի, համոզմունքների և վարվելակերպի կարողությունների ձևավորման գործում:

VIII^ա դասարանի տղաների միջև ծագել էր խնդիր, որը չէին կարողանում լուծել ո՛չ դասուհեկը և ո՛չ էլ ծնողները:

Ես, լինելով ոչ միայն հասարակագիտության ուսուցիչ, այլ նաև փոխնօրեն, որոշեցի միջամտել և լուծել մեր առջև ծառացած խնդիրը դասի միջոցով:

Նախքան դասաժամին անցնելը գրույցի միջոցով փորձեցի պարզել պատճառը:

Պարզվեց՝ խնդիրը առաջացել է աշակերտների ծնողների մեջ և երեխաները փորձում էին յուրովի լուծել այդ խնդիրը: Անցնելով երկրորդ քայլին՝ գրույց ունեցա աշակերտների ծնողների հետ առանձին-առանձին: Եվ քանի որ աշակերտները

սովորում էին միննույն դասարանում, որոշեցի հարցը բերել դասապրոցեսի հարթակ
և լուծել խնդիրը «Հանդուրժողականություն և անհանդուրժողականություն» թեմայի
շրջանակներում⁸: Դասապրոցեսի ընթացքում ստեղծվեց այնպիսի իրավիճակ, որ
միայն միմյանց հանդուրժելու պարագայում նրանք կկարողանային դուրս գալ այդ
իրավիճակից: Արդյունքը գոհացուցիչ էր: Նրանք կարողացան շփվել հանգիստ՝
առանց կոնֆլիկտների: Իհարկե խնդիրը վերջնական լուծում ստացավ միայն
հետագայում՝ դասղեկի և իմ կողմից միասնական հանձնարարություններ
կատարելու և

միջացառումներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու շնորհիվ:

Եզրակացություն և առաջարկություններ

Կրթական հաստատությունները, մասնավորապես՝ դպրոցը, այսօր կանգնած են
ուսուցման նոր պահանջների առջև, որոնք պետք է հաշվի առնեն ուսուցման
հումանիտար բովանդակությունը, մարդասիրական արժեքները և սովորողների
քաղաքացիական գիտակցությունը ձևավորելու, հասարակության փոփոխվող
պայմաններին աշակերտի հարմարվելու մեխանիզմները, ուսումնական
առարկաների՝ յուրաքանչյուր աշակերտին հասցեագրված ուսումնառության ներուժն
ավելի հզորացնելու և լիարժեք իրագործելու անհրաժեշտությունը:

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ եկանք այն եզրահանգմանը, որ.

- «Հասարակագիտություն» առարկայի միջոցով աշակերտներին
հնարավորություն է ընձեռվում գիտելիքներ ձեռք բերել իրենց իրավունքների
ու ազատությունների, պարտքի ու պատասխանատվության,
հանդուրժողականության և արժանապատվության, ազգային արժեքային
հասկացությունների և այլնի մասին:
- Գիտելիքներից բացի սովորողին անհրաժեշտ է տալ նաև դրանք շրջապատում
կիրառելու իրական կարողություններ, հմտություններ, ռազմավարություն՝
ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ուղղորդել նրա ներքին
ուժերն ու հնարավորությունները:

⁸Տե՛ս Հավելված (Դասապլան-2, էջ 25)

- Ուսուցման գործընթացում պետք է կարևորել վերջնարդյունքները և երեխայի ձեռք բերված նոր կարողունակությունների ամրապնդումը:
- Յուրաքանչյուր ուսումնական հաստատության գլխավոր նպատակը պետք է լինի սովորողի իրավունքների և ազատությունների, արժանապատվության պաշտպանությունը:
- Դեռահասների մոտ ավելի կայունանում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ազնվության, ընկերասիրության, հայրենասիրության ու մարդասիրության գգացմունքները:
- Արժանապատվությունը սկզբունք է, որը ընկած է մարդու իրավունքների հիմքում և միևնույն ժամանակ պաշտպանվում է որպես իրավունք՝ առանձին և այլ իրավունքների համատեքստում:

Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն.




Ի՞նչ գիտի և ի՞նչ կարող է անել աշակերտը: Այս խնդիրը լուծելի է դառնում, երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնարար արժեքները.

- ուսումնառության ընթացքում աշակերտները պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործող մասնակցի
- ուսուցիչը հրաժարվում է սովորեցնողի, վերահսկողի, խրատողի իր դերից և դառնում է այդ գործընթացը կազմակերպող, խորհրդատու, գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցելով որոնողական աշխատանքներին:

Օգտագործված գրականություն

1. ԱդամյանՆ., Դասավանդման մեթոդիկայի արդի պահանջներ:
Ուսումնամեթոդական ձեռնարկ: «Էդիթ Պրինտ», Երևան, 2018թ., 264 էջ:
2. Աշիկյան Ա., Ազգային և համամարդկային արժեքների հարաբերակցությունը
նոր սերնդի դաստիարակության գործում: ԵՊՀ
3. Արզումանյան Ս.Ջ., Շահբազյան Հ.Վ., Ազգային դպրոցի դաստիարակչական
համակարգի ստեղծման ու կառավարման մանկավարժահոգեբանական
հիմունքները, Եր., 1990թ.
4. Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժական արժեքանության հիմունքներ, Եր., 2011թ.
5. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ/Ա.Հովհաննիսյան, Կ.Հարությունյան,
Ս.Խրիմյան.-Եր.:Անտարես, 2006-124 էջ
6. Հովհաննիսյան Գ., «Մարդու արժանապատվությունն իբրև հիմնական
իրավունք»: Երևան, 2009թ.: էջ 10
7. ՀՀ Միջազգային պայմանագիր, Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, փոփոխված 11-րդ
արձանագրությամբ, 4-ը նոյեմբերի, 1950թ., Հոմ,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870>
8. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995թ.
հուլիսի 5-ի հանրաքվեով, ՀՀ Սահմանադրության առաջին փոփոխությունները

Դասի նպատակներն ու խնդիրները՝	<ul style="list-style-type: none"> ➤ Իմանա՝ որոնք են հիմնարար ածեքները՝ պատասխանատվություն, հավասարություն, ազատություն, հանդուրժողականություն և այլն: ➤ Իմանա՝ ինչ է պարտքը, ➤ Իմանա, որ պարտքը պատասխանատվության տեսակ է ➤ Իմանա, որ պարտքը միշտ պետք է վերադարձվի, և այն գինունի ➤ Իմանա պարտքի տեսակները:
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները՝	<p>Աշակերտը կկարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ տարբերակել հիմնավորված և չհիմնավորված պարտքերը, ➤ տարանջատել ֆորմալ և ոչ ֆորմալ պարտքերը, ➤ կշռադատել պարտք վերցնելու անհրաժեշտությունը, ➤ իմանալ, <ul style="list-style-type: none"> թե պարտքի հետ կապված ինչ ռիսկեր կարող են լինել ➤ իմանալ պարտատիրոջ և պարտատերի իրավունքներն ու պարտականությունները և թե ինչ հետևանքներ կառաջանան դրանք չկատարելու դեպքում, ➤ արժևորել անձնական պարտքը կատարելու պատասխանատվությունը: ➤ տարբերակել արժեքները և հակարժեքները
Միջառարկայական ասպ	Հայոց լեզու, Հայոց պատմություն, Գրականություն
Նոր բառեր ու բառակապակցություն	Արժեքներ, պարտք, պատասխանատվություն, պարտատեր,

ններ, անուններ, արտահայտություններ	պարտապան, վարկատու, վարկառու, մուրհակ, տոկոսադրույք, մարում, գրաֆիկ, ազատություն, հավասարություն	
Կապը աշխարհային րիհետ	հայոց լեզու (տերմինների ուսումնասիրում), գրականություն (օրինակ՝ Պեպոյի բարաթը), պատմություն (ե՞րբ է ձևավորվել ֆորմալ և ոչ ֆորմալ պարտքը):	
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ		Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում:		Նախատեսում է խմբային և դերային աշխատանք՝ արձանագրելով, թե՛ յուրաքանչյուր խմբի և թե՛ սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան:
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ <i>Ուսուցիչներ</i>
Կազմակերպչական աս (1-2 ընթացք)		Հաշվառում է սովորողներին, վերախմբավորում
Խթանման փուլ (5 ընթացք)	Աշակերտները լսում են, նշումներ կատարում, մտածում են տրված հանձնարարության շուրջ, հիշում անցածը և պատասխանում հարցերին. <div><p>Պարտք</p></div>	Մտազրոհի մեթոդի միջոցով ակտիվացնում է սովորողներին՝ օգտագործելով <u>Պարտք</u> բառը
Իմաստի ընկալում (20 ընթացք)	 Աշակերտները իրենց կյանքից բերեն օրինակներ և ցույց տան լավ պարտք և վատ պարտք արտահայտությունները:	 Հարցադրում աշակերտներին՝ բերեն օրինակներ պարտքի

	<p>✚ Փոքրիկ բեմադրությամբ ներկայացնել <<Պեպո>>-ից հատված՝ բարաթին վերաբերվող և բացատրել ինչպիսի՞ պարտքի օրինակ էր բարաթը: Ի՞նչ հետևանք ունեցավ ներանձնային հարաբերությունների վրա:</p>	<p>տարբեր տեսակներից,</p> <p>✚ Տալիս ենք պարտքի սահմանումը, ներկայացնում տեսակները,</p> <p>✚ Պարտքի տեսակների պաստառի ցուցադրում, մեկնաբանում:</p>
<p>Կշռադատում (15 րոպե)</p>	<p>✚ Աղյուսակի տեսքով շխատանք T-աձև մեթոդ, աղյուսակներից մեկում նշել ֆորմալ պարտքի աղբյուրները, առավելություններն ու թերությունները, մյուսում՝ ոչ ֆորմալ պարտքինը:</p>	
<p>Տնային առաջադրանքի հանձնարարում (2 րոպե)</p>	<p>✚ Գրել փոքրիկ շարադրություն «Ես ցանկանում եմ պարտք վերցնել, արդյոք դրա անհրաժեշտությունը կա»: Նշել հետևանքները, երբ պարտք ես վերցնում ոչ թե կարիքը, այլ ցանկությունը քավարելու համար:</p>	
<p>Անդրադարձ (2 րոպե)</p>	<p>✚ Փոքրիկ թերթիկների վրա գրված մտքերը շակերտները ընթերցելով տարբերակենո՞վ է պարտատերը, իսկ ո՞վ պարտապանը:</p> <div style="border: 1px solid black; padding: 10px; margin: 10px 0; text-align: center;"> <p>Ոչ մի ինտիմ, միայն կվերադարձնես:</p> </div> <div style="border: 1px solid black; padding: 10px; margin: 10px 0; text-align: center;"> <p>Ա՛յ իր շատե անհրաժեշտ երթեկաբողանայ իր օգնել</p> </div>	

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ







Վարդենիկի Ա. Օհանյանի անվան №2 հիմնական դպրոց


ԴԱՍԱՊԼԱՆ-2

ՈՒՍՈՒՑԻՉ - Գոհար Միլիտոնյան

Առարկա՝	Հասարակագիտություն	Ամսաթիվ	07.07.2022թ.	Կիսամյակ՝	II	Դասարան՝	VIII
Թեմա՝	Հանդուրժողականություն և անհանդուրժողականություն						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տետր, գրիչ, մարկեր, պաստառ						
Կիրառվող մեթոդներ՝	ԽԻԿ համակարգ, մտազրոհ, հարցազրույց, T-աձևն այլն						
Դասի նպատակներն ու խնդիրները՝	<p>➤ Իմանան՝ որոնք են հիմնարար աժեքները՝ պատասխանատվություն, հավասարություն,</p>						

	<p>ազատություն, հանդուրժողականություն և այլն:</p> <ul style="list-style-type: none"> ➤ տարբերակեն պատասխանատվություն ստանձնելու առավելություններն ու դժվարությունները, ➤ ներկայացնեն հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումներ ➤ ներկայացնեն իրավունքի, պատասխանատվության և հանդուրժողականության կապը ➤ դուրս հանել աշակերտների հանդուրժողականության «բեկորները»:
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները՝	<p>Աշակերտը կկարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ Հստակ ձևակերպել հանդուրժողականության սահմանումը, ➤ բերել հանդուրժողականության դրսևորման օրինակներ, ➤ տարբերել պատասխանատվություն ստանձնելու առավելություններն ու դժվարությունները, ➤ ներկայացնել իրավունքի, պատասխանատվության և հանդուրժողականության կապը: ➤ ծանոթանալ հանդուրժողականության սկզբունքների հռչակագրին, ➤ ներկայացնել հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումներ:
Միջառարկայական ասպ	Հայոց պատմություն, Գրականություն
Կապը այլառարկաների հետ	գրականություն (օրինակ՝ «Մի կաթիլ մեղրը»), պատմություն (հանդուրժողականությունը օգնել, թե՞ խանգարել է քաղաքական գործիչներին և հայ թագավորներին՝ որոշումներ կայացնելու գործում):
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	<p>Նպատակներին հասնելու ռազմավարությունը</p>

Համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում:		Նախատեսում է խմբային և դերային աշխատանք՝ արձանագրելով, թե՛ յուրաքանչյուր խմբի և թե՛ սովորողներից յուրաքանչյուրի դինամիկան:
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ <i>Ուսուցիչներ</i>
Կազմակերպչական աս (1-2 ընդհանուր)		Հաշվառում է սովորողներին, վերախմբավորում
Խթանման փուլ (5 ընդհանուր)	Աշակերտները լսում են, նշում են կատարում, մտածում են տրված հանձնարարության շուրջ, հիշում անցածը և պատասխանում հարցերին:	Մտազրոհի մեթոդի միջոցով ակտիվացնում է սովորողներին՝ օգտագործելով <u>Հանդուրժել</u> բառը
Իմաստի ընկալում (20 ընդհանուր)	<ul style="list-style-type: none">  Աշակերտները իրենց կյանքից բերեն օրինակներ հանդուրժողականության դրսևորումներից:  Փոքրիկ բեմադրությամբ ներկայացնել <<Մի կաթիլ մեղր>>-ից հատված և պարզաբանել, թե ի՞նչ հետևանք ունեցավ ներանձնային հարաբերությունների վրա: 	<ul style="list-style-type: none">  Հարցադրում աշակերտներին՝ բերեն օրինակներ հանդուրժող և անհանդուրժող մարդու արարքներ:  Տալիս ենք հանդուրժողականության սահմանումը:
Կշռադատում (15 ընդհանուր)	<ul style="list-style-type: none">  Աղյուսակի տեսքով աշխատանք T-աձև մեթոդ, աղյուսակներից մեկում նշել հանդուրժողականության, մյուսում՝ անհանդուրժողականության դրսևորումներ: 	
Տնային առաջադրանքի հանձնարարում	<ul style="list-style-type: none">  Ե՞րբ եք անհանդուրժող եղել: Բերել օրինակներ: 	

(2 թույլ)	
Անդրադարձ (2 թույլ)	 Փոքրիկ թերթիկներ ի վրա գրված մտքերը աշակերտները ընթերցելով կտարբերակեն՞ և հանդուժողը, իսկ ո՞վ անհանդուրժողը: